Մ. Ի. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀԱՅԿՈՒՍՀՐԱՏ • 1937 • ԵՐԵՎԱՆ

Պրոլետարներ բոլոր յերկիրների, միացե՛ք

49.8(47)
Կ-15

Մ. Ի. ԿԱԼԻՆԻՆ

ՍՏԱՑՎԱԾ Է 1961 թ.

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀԱՅԿՈՒՍՀՐԱՏ ● 1937 ● ԵԵՐԵՎԱՆ

А $\frac{\text{П}}{1552}$

М. И. КАЛИНИН

ПОЛОЖЕНИЕ О ВЫБОРАХ
В ВЕРХОВНЫЙ СОВЕТ СОЮЗА ССР И ЗАДАЧИ
СОВЕТОВ

Армпартиздат, Ереван, 1937 г.



ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների կանոնադրությունը, որն ընդունվել է ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի IV նստաշրջանի կողմից, այն օրենքն է, որը որոշում է ընտրողների կողմից ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի համար իրենց պատգամավորների ընտրությունների կարգն ու ձևը: Այդ օրենքը լիովին ու ամբողջությամբ կառուցված է Խորհրդային Միության Ստալինյան Սահմանադրության հիման վրա:

Իսկ ի՞նչպիսի առանձնահատկություններով է բնութագրվում մեր ընտրական սիստեմը:

Ընտրություններն ընդհանուր են, այսինքն Միության այն քաղաքացիները, որոնք ընտրությունների օրը 18 տարեկան են, իրավունք ունեն ընտրելու և ընտրվելու ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի մեջ: Այդ նշանակում է, որ մեր ամբողջ խորհրդային յերիտասարդությունը՝ 18 տարեկան հասակից սկսած, յերկրի բոլոր քաղաքացիների հետ միասին, ակտիվ մասնակցություն կունենա ընտրություններին: Ընտրական իրավունքների մեջ բնակչության այդչափ լայն ընդգրկում կա միայն Խորհրդային Միության մեջ: Հաղիվ թե կապիտալիստական աշխարհի ամենադեմոկրատական յերկիրներից որևիցե մեկը կարող է այդպիսի չքեղություն թույլ տալ իրեն, որովհետև իսկական, ոչ-ձևական ընտրական իրավունք տալ ամբողջ ժողովրդին—նշանակում է ունենալ ժողովրդական կառավարություն, մի կառավարություն, որի հիմնական նպատակը, անպայման, կլինի պայքարը կապիտալիզմի դեմ:

Բուրժուական յերկիրներում կապիտալիստական կլիկն ավելի ու ավելի յե քանդում, այսպես կոչված, բուրժուական դեմոկրատիան, ձգտելով չքողարկված, մերկ բռնության՝ ժողովրդական մասսաների նկատմամբ:

Միանգամայն այլ, հենց ճիշտ հակադիր դրության մեջ է գտնվում ԽՍՀՄ: Մեզ մոտ բանվոր դասակարգն ու կոլտնտեսային գյուղացիությունը կանգնած են իշխանության գլուխ: Աշխատավորների ավանգարդի—կոմունիստական կուսակցության նպա-

տակն է կոմունիստական հասարակության կառուցումը, որը հանդիսանում է նաև բանվոր դասակարգի ու պայքարի նրա ընկերակցի—կոլտնտեսային գյուղացիության նպատակը: Եվ որքան ավելի լայն, ավելի լրիվ ու ավելի խորը կերպով մասնակցեն աշխատավոր մասսաները յերկրի քաղաքական կյանքին, այնքան ավելի յե ապահովվում ու ամրապնդվում խորհրդային հասարակակարգը:

Ահա թե ինչու ընտրությունների մեր ընդհանրությունը վոչ մի ընդհանուր բան չունի կապիտալիստական յերկիրներում գոյություն ունեցող այսպես կոչված «ընդհանուր» ընտրությունների հետ: Մեզ մոտ այն բղխում է իշխանության գլուխ կանգնած բանվորների ու գյուղացիների խոր շահերից: Կապիտալիստական պետության մեջ ընտրությունների ընդհանրության նպատակն է խաբելը, աշխատավորության մեջ յեղած պարզամիտ մարդկանց վորսալը: Ընտրությունների ընդհանրության ոգեկլամ անելով, կապիտալիստական յերկիրների կառավարությունները ընտրությունների վերաբերյալ իրենց որենքների մեջ այս կամ այն ձևով (նստակեցություն, տարիք, գույքային դրություն և այլն) այնքան սահմանափակումներ են մտցնում, վոր ընտրական իրավունքի ընդհանրությունից վոչ մի բան ել չի մնում:

Ընտրությունների վերաբերյալ մեր որենքի մեջ կա միայն յերկու սահմանափակում. այդ—խելագարներին և դատարանի կողմից դատապարտված անձերին ընտրական իրավունքներից զրկելն է: Ըստ վորում դատապարտված անձերի համար դատարանը հատուկ հիշատակում է ընտրական իրավունքներից զրկելը վորոշ ժամանակով: Բայց այս դեպքում ևս ընտրական իրավունքներից զրկելու հարցի լուծումը փաստորեն հանձնված է Ժողովրդին, վորովհետև Խորհրդային Միության մեջ ժողովրդական դատարանն ընտրվում է չրջանի քաղաքացիների կողմից ընդհանուր, ուղղակի ու հավասար ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ: Սրանից յերևում է, թե վորքան մեծ է որենսդրի վստահությունը ժողովրդական մասսաների նկատմամբ: Եվ այլ կերպ լինել ել չի կարող, քանի վոր խորհրդային իշխանությունը—ժողովրդի իշխանությունն է և նրա հենարանն է հանդիսանում ԽՍՀՄ բոլոր աղգությունների բանվոր դասակարգն ու կոլտնտեսային գյուղացիությունը:

Ընտրությունների Կանոնադրության յերկրորդ հոդվածն ասում է. «ԽՍՀՄ բոլոր քաղաքացիները, վորոնք 18 տարեկան են

դառել, անկախ ռասայական ու ազգային պատկանելությունից, դավանանքից, կրթական ցենզից, նստակեցությունից, սոցիալական ծագումից, դույքային դրությունից ու անցյալ գործունեությունից, իրավունք ունեն մասնակցելու պատգամավորների ընտրություններին և ընտրվելու ԽՍՀՄ Գերագույն Սովետի մեջ»:

Պատգամավորների ընտրությունները հավասար են—յուրաքանչյուր քաղաքացի ունի մեկ ձայն. բոլոր քաղաքացիներն ընտրություններին մասնակցում են հավասար հիմունքներով: Շատ քաղաքացիների համար այս հոդվածը ծառայում է կարծեք թե վորպես պատմության թվական: Սովետական պայմաններում աճած յերիտասարդությունն այլ կերպ չի եվ մտածում, նա չի ըմբռնում քվեարկության վոչ հավասար պայմաններում:

Այլ պատկեր է բուրժուական դեմոկրատիայի յերկիրներում, վորտեղ իրավաբանական հավասարությունը ծառայում է վորպես կյանքում յեղած փաստական անհավասարության և մասնավորապես քվեարկության մեջ յեղած անհավասարության քողարկում:

Ցեսս չեմ խոսի իրավաբանական «հավասարության» մասին, վոր բղխում է բուրժուական որենքներից: Ի՞նչ հավասարություն կարող է լինել գործարանատիրոջ ու բանվորի միջև, կալվածատիրոջ ու գյուղացու միջև: Բայց հավասարության այդ իրավաբանական իրավունքն եվ այլանդակված է ամեն տեսակ սահմանափակումներով և, վորպես կանոն, բոլոր սահմանափակումներն ուղղված են չունևոր դասակարգերի դեմ: Վորպես որինակ վերցնենք նստակեցության ցենզը, յերբ ընտրելու իրավունք տրվում է այն անձերին, վորոնք կես տարուց վոչ պակաս կամ 2 տարուց վոչ պակաս բնակվում են տվյալ վայրում (համայնքում): Հասկանալի յե, վոր չքավորը կամ գործազուրկն ստիպված է ավելի հաճախակի փոխել բնակարանը, քան տնատերը: Գործարանատերերը, բանկիրները վորոշ յերկիրներում ունեն յերկու, յերեք ձայն—ըստ գործարանի վայրի և ըստ իրենց բնակավայրի: Բացի դրանից, նրանք նաև կարող են ճնշում գործ դնել իրենց ձեռնարկությունների ծառայողների վրա: Ամբողջ հատորներ կարելի յե գրել բուրժուական պառլամենտական ընտրությունների պատմությունից այն հաղարավոր խորամանկ արարքների մասին, վորոնց նպատակն է ժողովրդական մասսաներին հեռու պահել ընտրություններին մասնակցելուց:

Կանոնադրության 4-րդ հոդվածը, հենվելով ԽՍՀՄ Սահմանադրության 137-րդ հոդվածի վրա, խոսում է տղամարդկանց հետ

կանանց լիակատար հավասարության մասին. նրանք ոգտվում են ընտրելու և ընտրվելու իրավունքից տղամարդկանց հետ համահավասար: Այս հոդվածն ավելի լավ հասկանալու համար արժե կարդալ Բեբելի «Կինը և սոցիալիզմը» յերկը: Այն ժամանակ ավելի պարզ կլինի այդ հոդվածի անհրաժեշտությունը վոչ միայն ԽՍՀՄ Սահմանադրության մեջ, այլև «ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների կանոնադրության» առա՛ն դլխում:

Հինգերորդ հոդվածը վերարտադրում է ԽՍՀՄ Սահմանադրության 138-րդ հոդվածը: Կարմիր Բանակի շարքերում գտնվող քաղաքացիներն ընտրելու և ընտրվելու իրավունքից ոգտվում են բոլոր քաղաքացիների հետ համահավասար: Նման հոդվածի դուք չեք հանդիպի վո՛չ բուրժուական սահմանադրությունների մեջ, վո՛չ էլ բուրժուական ընտրական որենքների մեջ:

Կապիտալիստները ձգտում են իրենց բանակը պահպանել պրոլետարական ու ռադիկալ-մանրբուրժուական կուսակցությունների քաղաքական ներդործությունից: Նրանց այն կեղծավոր մեկնաբանությունը, թե բանակը կուսակցություններից դուրս է կանգնած, թե նրա խնդիրն է—պաշտպանել պետության սահմանները, լիովին հերքվում է ժամանակակից քաղաքական դրությամբ: Մենք գիտենք, վոր մի շարք յերկիրներում, ինչպես, որինակ Ճապոնիայում, բանակի վերնախավն է վարում քաղաքականությունը, իր պայմանները թելադրում կառավարությանը: Իհարկե, զինվորական գեներալների կլիկին նույնպես զեկավարում են կապիտալիստական խմբավորումները, բայց այդ ապացուցում է, վոր կապիտալիստական յերկիրների զինվորական վերնախավը սերտորեն կապված է կապիտալիստական վերնախավի հետ:

Մեզ մոտ բանակը ժողովրդական է, նա ապրում է նույն մտքերով, զաղափարներով ու ձգտումներով, ինչ վոր ամբողջ խորհրդային ժողովուրդը: Մեր բանակը վոչ միայն պահպանում է հայրենիքը, նա մասնակցում է սոցիալիզմի կառուցմանը, նա սերտորեն կապված է ամբողջ խորհրդային ժողովրդի հետ, ջերմորեն սիրելի յե նրա համար:

Կարմիր բանակի մասնակցությունը աշխատավորների խորհուրդների ընտրություններին ե՛լ ավելի յե մեծացնում բանակի կապը ժողովրդի հետ: Այդ կապն իրենց մոտ թույլ տալուց կապիտալիստները վախենում են այնպես, ինչպես սատանան խաչից: Բայց այդ կապը առանձնապես վողջունում է խորհրդային իշխանությունը, այդ կապի համար պայքարում է կոմունիստական

կուսակցությունը, վորովհետև այդ կապը ծառայում է յերկրի պաշտպանության գործին։

Կանոնադրության վեցերորդ հոդվածը Սահմանադրության 141-րդ հոդվածի հիման վրա վորոշում է, վոր ընտրությունների ժամանակ թեկնածուներն առաջադրվում են ըստ ընտրական ոկրուգների։ Թեկնածուների առաջադրումն ըստ ընտրական ոկրուգների մեծ նշանակություն ունի։ Ընտրությունների այդպիսի սիստեմը յերաշխիք է տալիս, վոր Գերագույն Խորհրդի մեջ կընտրվեն այնպիսի մարդիկ, վորոնք իրենց քաղաքական, հասարակական ու արտադրական աշխատանքով անձնապես հայտնի յեն այն ոկրուգի ընտրողներին, վորտեղ նրանք կառաջադրվեն։

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ընտրողների ցուցակներ կազմելու պարտականությունը դրվում է—քաղաքներում՝ քաղաքային խորհուրդների վրա, ռայոնական բաժանում ունեցող քաղաքներում՝ ռայոնական խորհուրդների վրա, գյուղերում՝ գյուղական խորհուրդների վրա։

Այդ—հսկայական ու պատասխանատու աշխատանք է։ Հոդատար խորհուրդներն արդեն այժմվանից աշխատանք են տանում ցուցակներ կազմելու ուղղությամբ։

Ցուցակներ կազմելը—տեխնիկական աշխատանք է, բայց կարելի յե վստահորեն ասել, վոր այդ ցուցակների վորակը կբնութագրվի խորհրդային ապարատի, խորհրդային կազմերի վիճակը, աշխատունակությունն ու կուլտուրականությունը։

Ընտրողների ցուցակների մեջ մտցվում են ընտրական իրավունք ունեցող, ցուցակները կազմելու մոմենտին տվյալ խորհրդի տերիտորիայում բնակվող (մշտապես կամ ժամանակավորապես), ընտրությունների որը 18 տարեկանի հասած բոլոր քաղաքացիները (հոդված 8-րդ)։

Ճնշող մեծամասնությամբ՝ յուրաքանչյուր գյուղական խորհրդի տերիտորիայում կլինեն մի քանի ընտրական շրջաններ, իսկ մեծ քաղաքներում դրանց թիվը կհասնի հարյուրի, հետևապես, նախքան ընտրողների ցուցակներ կազմելուն ձեռնարկելը, անհրաժեշտ կլինի նախապես նշել, թեկուզ մոտավոր ձևով, նաև ընտրական շրջանների տերիտորիան։

Տեղական խորհուրդներն արդեն այժմվանից, առանց ժամանակ կորցնելու, պետք է իրենց համար վորոշեն, թե նրանք բնակ-

չությանն ի՞նչ ձևով են ծանոթացնելու ընտրողների ցուցակի հետ, և ի՞նչպես է ապահովվելու այն հնարավորությունը, որ ընտրողները կարողանան ստուգել, թե իրենք ճի՞շտ են մտցված արդյոք ցուցակների մեջ:

Կանոնադրության 15-րդ հոդվածն ընտրողներին իրավունք է տալիս ցուցակների հրապարակման որվանից մինչև ընտրությունների որն իրենց բնակավայրը փոխելու դեպքում քվեարկել իրենց նոր բնակավայրում: Բայց այս դեպքում նրանք պետք է խորհրդին հայտնեն իրենց մեկնելու մասին, որպեսզի կարողանան ընտրողների ցուցակի մեջ նրանց նշանակել որպես մեկնածներ, այնուհետև նրանք այն խորհրդից, որտեղ առաջ ապրում էին, պետք է վերցնեն այլ վայրում քվեարկության մասնակցելու իրավունքի վկայական: Այդ վկայականն ընտրողին իրավունք է տալիս նրան մտցնելու նոր բնակավայրի (ապրելու տեղի) ընտրական ցուցակի մեջ, որտեղ նա կքվեարկի բոլոր քաղաքացիների հետ համահավասար: Նկատի ունենալով մեր բնակչության շարժունությունը, անհրաժեշտ է, որ խորհուրդները, հատկապես քաղաքային խորհուրդները, պատրաստ լինեն ընտրողների այդ պահանջները բավարարելու համար: Իսկ այնպիսի կենտրոններում, ինչպես են Մոսկվան, Լենինգրադը, Կիևը և այլն, հավանաբար անհրաժեշտ կլինի, որ ռայոնական խորհուրդները հատուկ ապարատներ ստեղծեն այդ աշխատանքները կատարելու համար:

Ընտրողների ցուցակի մեջ անճշտություն լինելու վերաբերյալ դիմում տրվում է աշխատավորների պատգամավորների այն խորհրդին, որը հրապարակել է ցուցակները (հոդվ. 16-րդ): Խորհրդի կայացրած որոշման հետ համաձայն չլինելու դեպքում դիմում տվողը կարող է բողոք ներկայացնել ժողովրդական դատարանին, որի վճիռը վերջնական է:

ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՅԵՎ ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՈԿՐՈՒԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Միության Խորհրդի ընտրությունների ընտրական ոկրուգը կազմվում է ոկրուգին 300,000 բնակիչ սկզբունքով (հոդվ. 21-րդ): Յուրաքանչյուր ընտրական ոկրուգ ուղարկում է մեկ պատգամավոր: Ներկայումս տեղերում և կենտրոնում աշխատանք է ծավալվել ընտրական ոկրուգներ կազմակերպելու ուղղությամբ: Միության Խորհրդի ընտրությունների ընտրական

Ոկրուգները նշվում են յերկրամասերի, միութենական, ավտոնոմ հանրապետությունների ու մարզերի տերիտորիալ սահմանների չրջանակում, ըստ վորում, վորպես կանոն, վարչական չրջաններն ոկրուգի մեջ կմտնեն ամբողջական ձևով: Գրակտիկան ցույց տվեց, վոր վոչ բոլոր ոկրուգներում կլինի ստուգ կերպով 300·000-ական բնակիչ, բայց նորմայից կատարվող այդ չեղումները նախնական նշագծման ժամանակ աննչան յեղան, նրանք, վորպես կանոն, դուրս չեն գալիս 3—5 տոկոսի սահմաններից: Բնակչությունն ըստ ոկրուգների բաշխելու ժամանակ մաթեմատիկական ճչտություն, հասկանալի յե, վոր անհնարին ել ե կիրառել չե՞ վոր յուրաքանչյուր որ տեղի յե ունենում բնակչության աճում և նվազում, վորոնք կարող են ճչտվել միայն հետագա հաչվառմամբ:

Ընտրական ոկրուգի կենտրոնը պետք ե հաղորդակցության հանապարհներով կապված լինի այդ ոկրուգի մեջ մտնող չրջանների հետ, վորպեսզի ընտրողները և չրջանային ընտրական հանձնաժողովի անդամները կարողանան համեմատարար հեչտությամբ գնալ-հասնել ոկրուգային ընտրական հանձնաժողովին: Այնուհետև, հարկավոր ե, վոր ընտրական չրջանները, յեթե վոչ հեռախոսային, ապա համենայն դեպս հեռագրական կապ ունենան ոկրուգային ընտրական հանձնաժողովի հետ: Ցանկալի յե, վոր ոկրուգային կենտրոնն ունենա բավականաչափ խոշոր կուլտուրական բազա և տպարան, վորը կարողանա սպասարկել ընտրություններն ոկրուգում: Առհասարակ ոկրուգային կենտրոնի ընտրությունը և այս կամ այն չրջանը նրան կցելը պահանջում ե մեծ խորաթափանցություն և գիտենալը վոչ միայն աշխարհագրությունը, այլև կապի միջոցները, հաղորդակցության ճանապարհները և այլն:

Մի փոքր այլ կերպ կազմակերպված կլինեն Ազգությունների Խորհրդի ընտրությունների ոկրուգները: Ազգությունների Խորհրդի ընտրությունների ընտրական ոկրուգը կազմվում ե հետևյալ սկզբունքով—25 ոկրուգ՝ ըստ յուրաքանչյուր միութենական հանրապետության, 11 ոկրուգ՝ ըստ յուրաքանչյուր ավտոնոմ հանրապետության, 5 ոկրուգ ըստ յուրաքանչյուր ավտոնոմ մարզի և մեկ ընտրական ոկրուգ՝ յուրաքանչյուր ազգային ոկրուգում: Ազգությունների Խորհրդի ընտրությունների յուրաքանչյուր ոկրուգ ընտրում ե մեկ պատգամավոր: Ազգությունների Խորհրդի ընտրությունների ոկրուգներ կազմելիս մենք մեծ

տարբերություն կունենանք այդ ոկրուգների բնակչության թվի տեսակետից։ Այդ այն պատճառով է, որ յուրաքանչյուր միութենական հանրապետության բնակչություն, այդ հանրապետության մեջ մտնող ավտոնոմ հանրապետությունների ու մարզերի հետ միասին, բաժանվում է 25 ոկրուգի։ Իսկ բնակչության քանակը միութենական հանրապետություններում միևնույնը չէ, ուստի և բնակչության թիվն էլ Ազգությունների Խորհրդի ընտրությունների ոկրուգներում նույնպես միևնույնը չէ։ Նույնը ստացվում է նաև յուրաքանչյուր ավտոնոմ հանրապետություն 11 ոկրուգի, յուրաքանչյուր ավտոնոմ մարզ 5 ոկրուգի բաժանելիս։ ԽՍՀՄ Սահմանադրության 35-րդ հոդվածի հիման վրա՝ ավտոնոմ հանրապետություններից յուրաքանչյուրը կունենա Ազգությունների Խորհրդի ընտրությունների տասնմեկական ոկրուգ։ Նշանակում է, այդ հանրապետությունների ընտրողները քվեարկության ժամանակ կունենան յերեք ընտրական բյուլետեն, Գերագույն Խորհրդի թեկնածուների յերեք ցուցակ։ Մեկը Միության Խորհրդի համար՝ 300·000 բնակչությունից, մեկը Ազգությունների Խորհրդի համար՝ իրենց (ՌՖՍՀ-ից) և մեկը Ազգությունների Խորհրդի համար՝ իրենց ավտոնոմ հանրապետության կողմից։ ՌՖՍՀ յերկրամասերում ու մարզերում (բացառությամբ ավտոնոմ հանրապետությունների, ազգային մարզերի ու ոկրուգների) բնակվող ընտրողները, որինակ, Մոսկվայի, Վորոնեժի մարզերում, Լենինգրադ, Մոսկվա, Դոնի Ռոստով քաղաքներում և այլն, կունենան յերկու ընտրական բյուլետեն։ Ուկրաինայի ընտրողները նույնպես կունենան յերկու բյուլետեն, իսկ Մոլդավական ԱԽՍՀ ընտրողները կունենան յերեք ընտրական բյուլետեն։ Այսպիսով, ընտրությունների Կանոնադրության 22-րդ հոդվածի հիման վրա ԽՍՀՄ բոլոր, թվական տեսակետից նույնիսկ ամենափոքր ժողովուրդներն իրենց ներկայացուցիչները կունենան ԽՍՀՄ Գերագույն Խորհրդում։

Այդ էլ հենց նշանակում է Լենինի—Ստալինի ազգային քաղաքականության իրականացումը պրակտիկայում։

Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի ընտրությունների ընտրական ոկրուգները կազմվում են ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության կողմից (հոդվ. 23-րդ) և ոկրուգների ցուցակը հրապարակվում է ընտրությունների օրը սահմանելու հետ միաժամանակ (հոդվ. 24-րդ)։

ԸՆՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ձայներն ընդունելու և հաշվելու համար ընտրական ոկրուգները բաժանվում են ընտրական շրջանների, նրանք ընդհանուր են հանդիսանում Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի ընտրությունների համար:

Ընտրական շրջանները կազմվում են քաղաքներում քաղաքային խորհուրդների կողմից, ռայոնական բաժանում ունեցող քաղաքներում՝ ռայոնական խորհուրդների կողմից, և գյուղական վայրերում՝ շրջանային խորհուրդների կողմից (հոդվ. հոդվ. 25 և 26):

Հաճախ հարց են տալիս. ի՞նչ կերպ կարող է մեկ ընտրական շրջանն ընտրությունների որն սպասարկել, որինակ, Դաղստանի ավտոնոմ հանրապետության մեջ, յերեք ընտրական ոկրուգ — Միության Խորհրդի, Ազգությունների Խորհրդի համար՝ ՌԽՍՖՀ-ի գծով և Դաղստանի ավտոնոմ հանրապետության գծով: Յես պետք է դրան ավելացնեմ, վոր բնակչության թվի տեսակետից վոչ մեծ շրջանում, հավանորեն, կլինի մեկ քվեատուփ:

Ընտրական շրջանը միակ կետն է հանդիսանում բյուլետեններն ընդունելու համար, իսկ ձայների հաշվումն ըստ բոլոր բյուլետենների և քվեարկության արդյունքների հանձնումը համապատասխան ոկրուգային ընտրական հանձնաժողովներին—շրջանային ընտրական հանձնաժողովի գործն է:

Մինչև 2 հազար բնակչություն ունեցող գյուղխորհրդի տերիտորիան, իբրև կանոն, կազմում է մեկ ընտրական շրջան: 500-ից մինչև 2 հազար բնակչություն ունեցող ստանիցաներում, գյուղերում, շեներում կազմվում է առանձին շրջան: Իսկ հյուսիսային ու արևելյան շրջաններում, վորտեղ գերակշռում են սակայն ու արևելյան շրջաններում, վորտեղ գերակշռում են սակայն ու արևելյան շրջաններում, թույլատրվում է շրջաններ կազմել հարյուր բնակչից վոչ պակաս լինելու դեպքում:

Քաղաքները և յերկու հազարից ավելի բնաչություն ունեցող գյուղական բնակավայրերն ընտրական շրջանների բաժանվում են 1500—2500 բնակչությանը մեկ ընտրական շրջանի հաշվով: Նավարկության մեջ գտնվող այն նավերը, վորոնց վրա կան վոչ պակաս քան 50 ընտրող, կարող են կազմել առանձին ընտրական շրջան:

Այն հիվանդանոցներին, ծննդատներին, հաշմանդամների

տներին, սանատորիաներին կից, վորտեղ կան վոչ պակաս քան 50 ընտրող, ստեղծվում են առանձին ընտրական շրջաններ։

Ընտրական շրջանները կազմվում են վոչ ուշ քան ընտրություններից 45 որ առաջ։

Ամբողջ Միության մեջ ներկայումս աշխատանք է կատարվում ընտրական ակրուգներ կազմելու ուղղությամբ, կարելի յե ասել, վոր արդեն բավականին մեծ նախնական պատրաստություն է տեսնված այդ բանի համար, բայց ընտրական շրջանների կազմումը դեռ վոչ մի տեղ չի սկսվել։ Անհրաժեշտ է ձեռնամուխ լինել դրան, և ձեռնամուխ լինել վորքան կարելի յե շուտ։ Ընտրությունների Կանոնադրությունը պարզ ցուցումներ է տալիս, թե ինչպես պետք է անել այդ։ Պետք է շտապել նաև այն պատճառով, վոր ընտրողների ցուցակները կազմվում են ըստ ընտրական շրջանների։ Առանց նախապես ընտրական շրջանը նշադծելու չի կարելի ձեռնարկել ընտրողների ցուցակները կազմելուն։ Այդ աշխատանքը կատարելիս տեղական խորհուրդները գործ կունենան վոչ միայն շրջանների տերիտորիայի հետ՝ անհրաժեշտ է, վոր նրանք մտածեն նաև այն չենքի մասին, վորը կարելի կլինի ոգտագործել ընտրությունների ժամանակ։ Մի խոսքով, գործնական աշխատանք շատ կլինի և վորտեղ այդ աշխատանքը շուտ սկսեն, այնտեղ, անտարակույս, ավելի լավ նախապատրաստված կլինեն ընտրություններին։

ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների կենտրոնական ընտրական հանձնաժողովը կազմվում է աշխատավորների հասարակական կազմակերպությունների ու ընկերությունների ներկայացուցիչներից և հաստատվում է ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության կողմից, ընտրությունների որը հրապարակելու հետ միաժամանակ (հոդված 34–րդ)։

Նույն սկզբունքով ել յուրաքանչյուր միութենական ու ավտոնոմ հանրապետության մեջ, ավտոնոմ մարզում ու ազգային ակրուգում ստեղծվում են Ազգությունների Խորհրդի ընտրությունների ընտրական հանձնաժողովները։ Նրանք հաստատվում են հանրապետությունների գերագույն խորհուրդների նախագահությունների և ավտոնոմ մարզերի ու ազգային ակրուգների աշխատավորների պատգամավորների խորհուրդների կողմից։ Նրանք հետևում են ընտրությունների ընթացքում «ԽՍՀՄ Գե-

բայուն Խորհրդի ընտրությունների Կանոնադրությունն» անշեղորեն կատարելուն, քննության են առնում ընտրական հանձնաժողովների սխալ գործողությունների վերաբերյալ բողոքները և վերջնական վորոշումներ են կայացնում դրանց առթիվ:

Միության Խորհրդի ընտրությունների և Ազգությունների Խորհրդի ընտրությունների ոկրուգային ընտրական հանձնաժողովները կազմվում են աշխատավորների հասարակական կազմակերպությունների ու ընկերությունների ներկայացուցիչներից և բաղկացած են լինում նախագահից, նախագահի տեղակալից, քարտուղարից և ութը անդամից: Ըստ վորում Միության Խորհրդի ընտրությունների ոկրուգային ընտրական հանձնաժողովը հաստատվում է աշխատավորների պատգամավորների յերկրային ու մարզային խորհուրդների կողմից այն հանրապետություններում, վորտեղ կա յերկրային ու մարզային բաժանում, և Գերագույն խորհուրդների կողմից, վորտեղ այդպիսի բաժանում չկա: Ազգությունների Խորհրդի ընտրությունների ոկրուգային ընտրական հանձնաժողովները հաստատվում են հանրապետությունների Գերագույն խորհուրդների և ավտոնոմ մարզերի աշխատավորների պատգամավորների խորհուրդների կողմից:

Ոկրուգային ընտրական հանձնաժողովները գրանցում են Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի համար առաջադրված թեկնածուներին, շրջանային հանձնաժողովներին մատակարարում են ընտրական բյուլետեններ, հաշվում են ձայները և ընտրված պատգամավորին վկայական են տալիս ընտրվելու մասին:

Միության Խորհրդի ընտրությունների ոկրուգային ընտրական հանձնաժողովները, բացի դրանից, հետևում են խորհուրդների ու գործկոմների կողմից ընտրական շրջանները ժամանակին կազմակերպելուն և ընտրողների ցուցակները ժամանակին կազմելուն ու ընդհանուրի գիտությանը հասցնելուն, ուղարկում են շրջաններին ընտրական ծրարները:

Շրջանային ընտրական հանձնաժողովները կազմվում են վերաբաշխ ընտրական հանձնաժողովների սկզբունքով և հաստատվում են քաղաքներում՝ քաղաքային խորհուրդների կողմից, ռայոնական բաժանում ունեցող քաղաքներում՝ ռայոնական խորհուրդների կողմից, գյուղական վայրերում՝ շրջանային խորհուրդների կողմից—վոչ ուշ քան ընտրություններից 40 որ առաջ

ռաջ։ Շրջանային հանձնաժողովն ընտրական շրջանում կատարում է ընտրական բյուլետենների ընդունումը, Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի պատգամավորության համար առաջադրված յուրաքանչյուր թեկնածուի ստացած ձայների հաշվումը։ Քվեարկությունն ու հաշվումը վերջացնելուց հետո շրջանային ընտրական հանձնաժողովն ընտրությունների դրծավարությունը հանձնում է Միության Խորհրդի ընտրությունների ոկրուգային և Ազգությունների Խորհրդի ընտրությունների ոկրուգային ընտրական հանձնաժողովներին։

Շրջանային ընտրական հանձնաժողովի վրա է դրված ընտրողների քվեարկությունն անցկացնելը։ Նա, այսպես ասած, յերես-առ-յերես անմիջականորեն հանդիպում է ընտրողների մասաներին, ուստի և նրա կազմակերպմանը և անձնական ընտրությանն աշխատավորների հասարակական կազմակերպություններն ու ընկերությունները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն։ Համենայն դեպս այդ հանձնաժողովի մեջ պետք է լինեն մարդիկ, վորոնք հեղինակություն ունենան ընտրողների համար։ Այսպիսի քվեարկություն կատարվում է առաջին անգամ և հարկավոր է այն անցկացնել մաքսիմալ չափով կազմակերպված, վորը մեծապես կախված կլինի շրջանային հանձնաժողովի հմուտ ղեկավարությունից, ընտրությունների որենքը ճշգրիտ կերպով կատարելուց։

ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորության համար թեկնածուներ առաջադրելու իրավունքը շատ լայն է. այն իրականացնում են ինչպես աշխատավորների հասարակական կազմակերպությունների ու ընկերությունների կենտրոնական որգանները, այնպես էլ նրանց հանրապետական, յերկրային, մարզային ու շրջանային որգանները, ինչպես նաև բանվորների ու ծառայողների ընդհանուր ժողովները՝ ձեռնարկություններում, կարմիր-բանակայիններինը՝ զորամասերում, այլև գյուղացիների ընդհանուր ժողովները՝ կոլտնտեսություններում, խորհտնտեսությունների բանվորներինն ու ծառայողներինը՝ խորհտնտեսություններում (հոդված 57)։

Այդ նշանակում է, վոր բանվորները, կոլտնտեսականները,

ծառայողները լիակատար հնարավորություն ունեն իրենց միջից թեկնածուներ առաջադրելու ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի համար։ Այդ կանխորոշում է թեկնածուությունների անհատական քննարկումը մասսայական ժողովներում՝ ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղում։ Դա խոսում է այն մասին, վոր որենքը ձգտում է ԽՍՀՄ Գերագույն որդանը սերտ կապերով կապել ժողովրդի լայն մասսաների հետ։

Աշխատավորների այն բոլոր հասարակական կազմակերպություններն ու ընկերությունները, վորոնք թեկնածու յեն առաջադրում Գերագույն Խորհրդի պատգամավոր ընտրելու համար, պարտավոր են ընտրություններն սկսելուց 30 որ առաջ նրան գրանցել համապատասխան ոկրուգային ընտրական հանձնաժողովում և պետք է ներկայացնեն ժողովի արձանագրությունը՝ ժողովի նախագահության անդամների ստորագրությամբ, մատնանշելով նրանց տարիքը, բնակության վայրը, կազմակերպության անունը, նշելով ժողովի տեղը, ժամանակը և մասնակիցների թիվը։ արձանագրության մեջ պետք է մատնանշված լինեն թեկնածուի ազգանունը, անունն ու հայրանունը, նրա տարիքը, բնակավայրը, կուսակցականությունը, զբաղմունքները։ Բացի դրանից, պետք է արձանագրությանը կցված լինի թեկնածուի հայտարարությունն այն մասին, վոր նա համաձայն է քվեարկվել տվյալ ընտրական ոկրուգում։

Աշխատավորների յուրաքանչյուր կազմակերպության ու ընկերության համար, վորը թեկնածու յե առաջադրել և վերջինս տոմարագրված է ոկրուգային ընտրական հանձնաժողովի մոտ, ինչպես և ԽՍՀՄ յուրաքանչյուր քաղաքացու համար իրավունք է ապահովվում անարգել կերպով այդ թեկնածուի ոգին ագիտացիա անելու ժողովներում, մամուլում և այլ յեղանակներով (հոդվ. հոդվ. 61, 65, 70)։ Այստեղից յերևում է, թե վորքան մեծ չեն Գերագույն Խորհրդի պատգամավորության համար թեկնածուներ առաջադրելու ձևականությունները և վորքան մեծ է հոդատարությունն աշխատավորների հասարակական կազմակերպությունների ու ընկերությունների իրավունքներն ապահովելու համար։

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Ընտրությունները կատարվելու յեն վոչ աշխատանքային որ, առավոտյան ժամը 6-ից մինչև գիշերվա ժամը 12-ը։

Ընտրությունների որը — ամենապատասխանատու որն է։ Այն ամփոփելու է ընտրությունների համար մեր ագիտացիոն ու կազմակերպական նախապատրաստության արդյունքները։ Առանձնապես մեծ է շրջանային ընտրական հանձնաժողովների, նրանց անդամների ու նախագահների վրա դրվող պատասխանատվությունը։ Քվեարկության կարգն սքանչելիորեն շարադրված է «ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների Կանոնադրության» մեջ։ Կարևոր է, որ կատարելով այդ կարգը, ընտրողների աչքում այն չդարձվի կաշկանդիչ, ավելորդ։ Չե՞ որ սահմանված ամբողջ կարգի միակ նպատակն է—ընտրողներին պաշտպանել ավելորդ կաշկանդումներից, ապահովել նրա քվեարկության գաղտնի լինելը, ընտրողների ամբողջ մասսային հնարավորություն տալ քվեարկության միջոցով արտահայտելու իր կամքը։

Յուրաքանչյուր ընտրող կարող է քվեարկել միայն անձամբ, ներկայանալով քվեարկության համար հատկացված շենքը և ընտրական բյուլետենները փակված ծրարով դցելով քվեատուփի մեջ։ Ընտրական բյուլետեններն ու ծրարն ընտրողն ստանում է իր անձնագիրը շրջանային ընտրական հանձնաժողովի քարտուղարին ներկայացնելիս և այն բանից հետո, երբ քարտուղարը կստուգի, թե տվյալ քաղաքացին մտցված է այդ ընտրական շրջանի ընտրական ցուցակի մեջ։

Այնուհետև նա գնում է այլ անձերից առանձնացված սենյակը կամ կաբինան, որը հատկապես հարմարեցված է ընտրական բյուլետենները լրացնելու համար, որտեղ ջնջում է իր չցանկացած թեկնածուներին, յուրաքանչյուր բյուլետենի մեջ թողնում է այն թեկնածուի ազգանունը, որի ոգին ցանկանում է քվեարկել, բյուլետենները դնում է ծրարի մեջ և փակելով ծրարը՝ այն գցում է քվեատուփի մեջ։ Պարզ է, որ առանձնացված սենյակներ կամ կաբիններ ընտրական շրջանում անհրաժեշտ կլինի ունենալ յերկու–յերեք հատ, որպեսզի քվեարկողների հերթեր չգոյանան։

Ընդհանուր առմամբ այս է քվեարկության պրոցեսը։ Այս առթիվ հարցումներ չափազանց շատ կան, բայց ինձ թվում է, որ «ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների Կանոնադրության» VII գլուխը լրիվ պատասխան է տալիս քվեարկության կարգի վերաբերյալ ծագող հարցերին, հարկավոր է միայն ուշադիր կարդալ այդ գլուխը։

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՎՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների Կանոնադրություն» ամբողջապես հաշվի է առնված աշխատավորների լայն մասսաների համար. նա ուղղված է այն բանին, որպեսզի որքան կարելի է ավելի լավ ապահովվի Խորհրդային Միության քաղաքացիների ընտրական իրավունքը: 85-րդ հոդվածն ասում է, որ քվեատուփերը բաց անելու և ձայները հաշվելու ժամանակ իրավունք ունեն ներկա գտնվել աշխատավորների հասարակական կազմակերպությունների ու ընկերությունների հատկապես այդ բանի համար լիազորված ներկայացուցիչները, ինչպես նաև մամուլի ներկայացուցիչները:

Անվավեր են համարվում վոչ-սահմանված տիպի ու դույնի բյուլետենները, այն բյուլետենները, որոնք տրված են առանց ծրարի կամ վոչ-սահմանված տիպի ծրարով, այն բյուլետենները, որոնց մեջ թեկնածուների թիվն ավելի է ընտրելիք պատգամավորների թվից (հոդվ. 90):

Շրջանային ընտրական հանձնաժողովներից ստացվող արձանագրությունների հիման վրա ընտրությունների ոկրուգային հանձնաժողովները հաշվում են քվեարկության արդյունքները:

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորության համար առաջադրված այն թեկնածուները, որոնք ստացել են ձայների բացարձակ մեծամասնություն, այսինքն՝ ամբողջ ոկրուգում տրված և իրական ճանաչված բոլոր ձայների կեսից ավելին, համարվում են ընտրված (հոդվ. 104):

Արձանագրությունն ստորագրելուց հետո Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի ընտրությունների ոկրուգային ընտրական հանձնաժողովների նախագահները հրապարակում են ընտրությունների արդյունքները և պատգամավոր ընտրված թեկնածուներին վկայական են տալիս նրանց ընտրվելու մասին:

Դրանով վերջանում է ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների ամբողջ ցիկլը, ավելի ճիշտ—վերջանում է ընտրությունների հասարակական-քաղաքական մասը, որովհետև կենտրոնական, հանրապետական ու ոկրուգային ընտրական հանձնաժողովների աշխատանքը դեռ չի դադարում: Ազգությունների Խորհրդի, ինչպես նաև Միության Խորհրդի ընտրությունների ոկրուգային հանձնաժողովներն իրենց արձանագրություններն ուղարկում են միութենական ու ավտոնոմ հանրապետությունների

192—2

Ազգությունների Խորհրդի ընտրությունների հանձնաժողովներին և Կենտրոնական ընտրական հանձնաժողովին։ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը դրանցում և Գերագույն Խորհրդի ընտրված պատգամավորներին և ընտրությունների վերաբերյալ ամբողջ գործավարությունը հանձնում է Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի մանդատային հանձնաժողովներին։ Մանդատային հանձնաժողովի առաջադրությամբ պալատները վորոշում են կա՛մ ճանաչել լիազորությունները, կա՛մ թե բեկանել առանձին պատգամավորների ընտրությունը։

Ստալինյան Սահմանադրության հիման վրա ընտրական նոր որենքով Միության Գերագույն Խորհրդի կատարվելիք ընտրությունները մի նոր ուղենիշ են ԽՍՀՄ ժողովուրդների պատմական զարգացման և խորհրդային պետական շինարարության պատմության մեջ։ Ընտրական սիստեմի դեմոկրատացումն ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի սկզբունքով՝ գաղտնի քվեարկությամբ—նրա իրագործման հետևանքով կհասցնի մասսաների քաղաքական ակտիվության հետագա ուժեղացմանը, աշխատավորների նոր շերտերի ներդրավմանը պետության կառավարման մեջ։ Պրոլետարիատի դիկտատուրան կլինի բանվոր դասակարգի կողմից հասարակության պետական ղեկավարման ավելի ճևուն, հետևապես և ավելի հզոր սիստեմ։

Ընտրական նոր որենքն իր մեջ մարմնավորում է հետևողական և մինչև վերջը կայուն խորհրդային սոցիալիստական դեմոկրատիզմը. այն վկայում է Խորհրդային պետության ու խորհրդային ժողովրդի անխորտակելի ուժի մասին, ժողովուրդ, վորն անսահմանորեն նվիրված է Լենինի—Ստալինի կուսակցության գործին, կոմունիզմի համար մղվող պայքարի գործին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
Ընտրողների ցուցակների մասին	7
Միության խորհրդի և Ազգությունների խորհրդի ընտրությունների ընտրական ոկրուգների մասին . .	8
Ընտրական շրջանների մասին	11
Ընտրական հանձնաժողովների մասին	12
ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավորության համար թեկնածուներ առաջադրելու կարգի մասին . . .	14
Քվեարկության կարգի մասին	15
Ընտրությունների արդյունքները վորոշելու մասին . .	17

ՈՒՂՂՈՒՄ

Եջ	տող	տպված է	պետք է լինի
10	18 վ.	իրենց (ՌԽՖՍՀ-ից)	(ՌԽՖՍՀ-ից)

8624

Գրաբ. 18401

Թարգմ. Հ. Գրիգորյան, տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբագրիչ Ա. Ելչուջյան, կոնտրոլ սրբագրիչ Ցե. Տ. Մինասյան

Գլավլիտի լիազոր Ի—4922, Հրատ. № 505, Պատվեր № 192, Տիրաժ 30.000
Հանձնված է արտադրության 25/IX 1937 թ.
Ստորագրված է տպագրության 14/X 1937 թ.
Գինը 20 կ.
Հայկուսհրատի տպարան, Երևան, Ալավերդյան № 71

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0014396

ԳԻՆԸ ~~20-կոպ.~~
24.
519
ЦЕНА
11532

М. И. КАЛИНИН

ПОЛОЖЕНИЕ О ВЫБОРАХ В ВЕРХОВНЫЙ СОВЕТ СОЮЗА ССР И ЗАДАЧИ СОВЕТОВ

Армпартиздат, Ереван, 1937 г.